

24322

Պրոլետարների բոլոր յերկիրների, միացներ



Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԼՈՎ

ՃԱՌ

ԱՐՏԱՍԱՆԱԾ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԲԱՆՎՈՐՈՒ-
ՔԻՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԽՈՐՃՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ

331.87

4-90

ՀԿ(Բ)Կ ԿԿ ԿՈՒՍՀՐԱԾ • ՕԵՐԵՎԱՆ

12 AUG 2013

15 JAN 2010

331.87

4-90
m

Պըուլստաթներ ը բուրք յերկիրների, միացե՛ք

Կ. ՅԵ. ՎՈՐՈԶԵԼՈՎ

Գիտական պատմութեան համար Ա-33
Տարբան 1935 թ. դիմաց 15,000
մատուցութեան համար Ա-20

Ճ Ա Ր

ԱՐՏԱՍԱՆԱԾ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԲԱՆՎՈՐՈՒ-
ՔԻՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ

1935 ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ
38225-331.87

1935 ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ

K. E. ROPONEN

Dear Mr. Nenonen
Please accept my cordial welcome
and my best regards
from the Soviet Union.



Թարգմ. Մ. Զաքարյան
Խմբ. Հ. Գասպարյան
Սրբագրիչ Վ. Զիոնցյան
Տեխն. խմբ. Ա. Խոչշարյան



Գլուխիսի լիազոր Ը-84, հրատ. № 329
պատովեր № 385, տիրագ 15,000
Խոդեսու Ռ-80



Հայկական տպարան, Եկեղեց ՅԱԼԱԿԱՆՆԵՐԻ Ն 27

К. Е. ВОРОШИЛОВ

Речь на первом всесоюзном
совещании рабочих и работниц-
стахановцев

Армияншадат, Эреван, 1935

Ընկերներ,

Ես բախտավոր եմ, վոր ինձ և բաժին ընկել հաղորդելու ձեզ՝ աշխարհի լավագույն բանվոր դասակարգի բավագույն մարդկանց, մեր փառապահն ու քաջարի Կարմիր բանակի յեղբայրական վողջույնը։ (Մահահարություն։ Բացականչություններ՝ «Ուսա»՝ «Կեցե՞» մեր բաշարի կարմիր բանակը, Կլիմ Վորոշիլովի դեկավարությամբ» «Ուսա»՝, բացականչություններ՝ «Ուսա»։)

Ընկերներ, ստախանութականները—մեր Հիանալի բանվոր դասակարգի առաջին կարգի մարդիկ—ամենից մոտիկը, ամենից հասկանալին, ամենից թանկադիննեն մեր կարմիր մարտիկների համար, Բանվորադյուդայական կարմիր Բանակի համար իր ամբողջությամբ։

Կարմիր բանակը հատուկ ուշադրությամբ է հետեւում, թե այս վերջին ամիսների ընթացքում ինչ է կատարվում մեր բանվոր դասակարգի մեջ։

Ստախանովյան շարժումը, վորը մեր յերկրի բանվորների ավելի ու ավելի մեծ շերտերն ե ընդուրկում, չի կարող կենդանի և անմիջական կերպով չհետաքրքրել մեզ՝ Կարմիր բանակին, մեզ՝ հրամանատարներին, քաղաշխատողներին, մարտիկներին, ինժեներներին և տեխնիկներին։ Աշխատանքի բարձր ոռ-

ցիալիստական արտադրողականության համար մղվող
ժողովրդական հզոր արշավը բոլորիս համար մոտիկ
և վոչ միայն այն պատճառով, վոր Կարմիր բանակը
մեր մեծ Հայրենիքի անխօնիքի, անբաժանելի մասն և.
վոչ միայն այն պատճառով, վոր Կարմիր բանակի
մարտիկները — դա գործարանների ու Փարբեկաների,
կոլտնեսությունների ու խորհտնեսությունների,
յերկաթուղիների և սոցիալիստական պետության մյուս
ձեռնարկությունների յերեկվա հարվածայիններն են,
վոչ միայն այն պատճառով, վոր մեր մարտիկներն
ու կրտսեր հրամանառաջները վաղը նորից ժողովրդական
տնտեսության աշխատողներն են լինելու, վաղ-
վա ստախանովականները, բուսիգինականները, կրի-
վոնոսականները, սմետանինականները, լինովրադո-
վականները, պրոնինականները և այլն, և այլն, վո-
րոնց անուններն այժմ հոչակվել են ամբողջ մեծ նոր-
հընդային յերկրով մեկ, — Կարմիր բանակն ամենա-
ուշադիր կերպով ուսումնասիրում և աշխատանքի նոր,
լավագույն որինակները, վարոնցով, ինչպես բանից
դուրս և գալիս, կարելի յե տառացիորեն հրաշքներ
դործել, — վորպեսզի անհապաղ այդ որինակները փո-
խադրի նորհընդային Միության գինամած ուժերի մար-
տական պատրաստության բոլոր ճյուղերը:

Կարմիր բանակն արդեն իսկ այժմ իր շարքերում
ունի բազմահազար մարդիկ, վորոնք լիակատար իրա-
վունքով կարող են ստախանովական կոչվել: Ինչպես
դուք գիտեք, Կարմիր բանակն անմիջականորեն նյու-
թական արժեքներ չի արտադրում, բայց նա ամենա-
ակտիվ մասնակցությունն ունի ըստ մեր Ստալինի
արտահայտության — կապիտալիներից առավել թանգ՝

առավել կարևոր, առավել արժեքավոր հանդիսացող
կապիտալի — կապրերի արտադրության գործում (ծա-
փահարություն), նա աճեցնում, ձեւավորում և հզիւմ
և մարդկանց :

Կարմիր բանակն արդեն իսկ այլեւ յերկրին, սո-
ցիալիստական տնտեսության բոլոր ճյուղերին, միքանի
հարյուր հազար հիանալի աշխատողներ և արտադրու-
թյան կազմակերպիչներ :

Կարմիր բանակն այժմ ձգտում է վոչ միայն հետ
չմնալ, այլ ըստ հնարավորության նաև առաջ անց-
նել պետական որդանիզմի մյուս ճյուղերից, վորպեսզի
բոլոր տեսակներով արդարացնի իր պատասխանա-
տու կոչումը պրոլետարական պետության սիստեմում :

Դուք գիտեք, վոր որերս արտադրության լավա-
գույն մարտիկ Նիկիտա Իզոտովի լավագույն աշակերտ
ընկեր Ստեփանենկոն, վորն այժմ Սեվծովյան նախա-
տորմի առավել առաջավոր կրտսեր հրամանատարնե-
րից մեկն է, իմանալով Ստախանովի հիանալի ձեռ-
նարկման մասին, արձակուրդում գտնվելով՝ գնում է
իր հարազատ հանքահորը և այստեղ, իզոտովյան
փորձը բազմապատկերով աշխատանքի ստախանովյան
կազմակերպմանն ու մեթոդին, սահմանում է նոր,
չտեսնված ռեկորդ, մի հերթակովում հատելով 552
տոնն ածուխ:

Այս փաստը ցայտուն կերպով բնորոշում է Կար-
միր բանակը և նրա մշտական յեղայրական ու կեն-
դանի կապը պրոլետարական պետության աշխատավոր
մասսաների հետ, նրա կապն աշխատանքի հարազատ
վայրերի հետ:

Մեր ողային ուժերի մեջ մենք աճեցրել ենք և

այժմ մեր ողագնացության բնադավառում ռւնենք
այնպիսի մարդիկ, վորոնք իրավամբ աշխարհիս լա-
վագույն ողագնացներն են համարվում: (Ծափահարու-
թյուն): Զիսուելով արդեն Խորհրդային Միության
բոլորին հայտնի հերոսների անունների մասին, կարե-
մի յեր տալ ավիացիայի հարյուրավոր մարդկանց ա-
նուններ, վորոնք ժամանակակից սոցիալիստական աշ-
խատողի որինակ են հանդիսանում ողին տիրապետե-
լու բնադավառում, պայքարի ամենահզոր, ամենաժա-
մանակակից զենքին՝ ավիացիային տիրապետելու բնա-
դավառում: Ողազուներ և ավիացիայի հրամանատար-
ներ՝ Յելսեյնի, Ստելանչենկոյի, Զիմմայի, Միլեշ-
կինի, աերոնավտներ՝ Զիլովի և Տրոպինի, ստրատո-
նավտներ՝ Պրոկոֆյեվի, Գոդունովի, Զիլեյի, Պրի-
լուցկու և ուրիշների անուններով, շտուրման՝ Սպի-
րինի, ինժեներողազու՝ Ֆիլինի, պլաներիստներ՝ Լի-
սիցինի և Սուխոմլինովի անուններով, —այս անուն-
ներով միայն սկսվում ե մեր կարմիր բանակի լավա-
գույն մարդկանց հակայական ցուցակը, —մարդիկ, վո-
րոնք լիովին, ինչպես հարկն ե, ստալինաբար տիրա-
պետել են ավիացիոն գործի տեխնիկային, գիտեն և
սիրում են իրենց գործը, ինչպես այդ վայել և յու-
րաքանչյուր ազնիվ կուսակցական և վոչ կուսակցա-
կան բոլշևիկի:

Դուք գիտեք մեր մարդկանց, վորոնք տիրապետել
են պարագյուտային արվեստին: Պարագյուտիզմը, դա-
ավիացիայի այն բնադավառուն ե, վորտեղ մենաշնորհը
պատկանում ե Խորհրդային Միությանը: Աշխարհում
չկա մի յերկիր, վորը կարողանար ասել, թե ինքը
կարող է այս ասպարեզում թեկուզ և մոտավորապես

հավասարվել Խորհրդային Միությանը, կամ, առավել
ևս՝ վոր նույնիսկ իր առջև ինքիր և դրել առաջիկա
տարիներում հասնել մեղ, ել յես չեմ ասում մեղնից
անցնելու մասին: (Ծափահարություն): Այժմ աշխար-
հում այսպիսի յերկիրներում չկան և յես չեմ սխալի-
ու այս գոռողություն չի լինի—յեթե ասեմ, թե
այդպիսիք չեն ել լինի (ծափահարություն), չեն լինի
այնքան ժամանակ, քանի զեր ուրիշ յերկիրներում ել
Խորհրդային իշխանություն չի լինի: (Ծափահարու-
թյուն):

Առանձին հերոսական մարդիկ, սխրագործության
ընդունակ մարդիկ, աշխարհում չառ կան: Այդպիսիք
կան նաև բուրժուական յերկիրներում, —թե ուկիտ-
նուներից դենը և թե յելլուպական մայր ցամաքում:
Բայց այդ յերկիրներում չեն գտնվի տասնյակ, հարյու-
րավոր, հազարավոր այսպիսի մարդիկ, վորոնք պարա-
շյուտիզմը սիրեյին ինչպես իրենց հարազատ, անհրա-
ժեշտ գործը: Չեն զտնվի այնպիսի մարդիկ, ինչպի-
սիք մեղ մոտ են, վոր սիրեյին այդ գործը և տիրա-
պետեյին զրան նախ և առաջ այն պատճառով, վոր
ըմբռնում են նրա նշանակությունն իրենց հայրենիքի
պաշտպանության գործի համար, սոցիալիզմի շնա-
րարության պաշտպանության համար:

Այս տարի Կիեվի մանելլիներում մենք ականատես
ելինք—այստեղ ներկա գտնվող ընկերներ կոռիրը,
Պոստիչեվը, Լյուբչենկոն և ուրիշներն ինձ հետ միա-
սին այնտեղ եյին, —թե ինչպես միաժամանակ ցած-
նետվեցին 1200 պարագյուտիստներ (ծափահարու-
թյուն), իրենց հրամանատար ընկեր ինդպերի գլխա-
վորությամբ, և ինչպես զրանից բացի, 40 բոլեյի

ընթացքում, —ինքնաթիւններով յերկու և կես հազարանոց գեսանտա իշեցվեց: (Ծափահարություն):

Այդ մասնելիքներին ներկա եյին Փրանսական, չեխոսոլովակյան և իտալական բանակների ներկայացուցիչները. նրանք նույնական այս բոլորը տեսան և զարմանում եյին այս նոր գործի մեջ մոտ ստացած թափի, ժեր մարդկանց արխության ու հմտության վրա: Համաշխարհային մատուցը ժեր ողային գեսանտների մասին քիչ չի գրում. որեւելիս աչքի եյի անցնում, թե ոտարերկրյա լրագրերն ինչ են հաղորդել կիեվի մանելիքների մատին: Բանից դուրս ե դալիս, վոր բուրժուական լրագրերը կիեվի այս պարագյուտային դեսանտում հաջում են վեհ ավելի քան 500 հոգի, իսկ մի շարք թերթեր ել դեսանտի թիվը հավասարեցնում են միտյն 150 հոգու: Զգիտես ինչու, թեզետ և մենք զայտնիք չենք զարձրել ու ճշտիվ ասել ենք, թե քանի պարտայուտիստ ե յած նետվել, նրանք չեն համարձակվել ձիւտ տեղեկություններ տալ: Դժվարանում եմ բացտարել, թե բուրժուական մամուլն ինչ նկատուառաներով ե դեկավարվել կիեվի գեսանտի քառակը նվազեցնելով: Յայց ի՞նչ կասեյին այդ կասկածներուն համեստ հրատարակությունների պարոնայք հրատարակիչներն ու իմբաղիներներ, յեթե նրանք վորանցին, վոր մոտավորապես նույն որերին, յեթե մենք կիեվի մոտ դիտում եյինք ինքնաթիւններից զենքը ձեռքերին և լիսկատար՝ հանդերձանքով 1200 հոգու միաժամանակ ցած թուշելու ցնցող տեսարանը, —մարդիկ, զիրոնք Կենց նոր վոտաները դետնին դրած՝ իսկույն և յեթ մարտի դիմոցին պայմանական հակառակորդի դեմ և զորոնք ել ամիելի մեծ վճռականությամբ, յեթե

հարկավոր լինի, կղնան իսկական թշնամու դեմ (ծափահարություն), — վոր նույն այդ ժամանակ հարեւան շրջաններից մեկում ինքնթիւններից նետվել են միաժամանակ վոչ թե 1200 պարագյուտիստներ, այլ 1800 հ. (ծափահարություն) և գեսանտ ե իշեցվել վոչ թե 2500 հոգի, այլ 5700 հոգի (ծափահարություն), և վոր մի շարք ուրիշ շղաններում՝ վոչ թե այնպիսի մեծ մանելիքներում, ինչպես կիեվի ուազմական շրջանի մանելիքներն եյին, այլ հասարակ վարժությունների ժամանակ նույնպես ցած են նետվել միախմբված, հզոր կերպով զինված պարագյուտիստ մարտիկների բազմաթիվ զակատներ: Ի՞նչ կասեյին նրանք, յեթե իմանային, վոր չնայած այն հանգամանքին, վոր պարագյուտիզմը կարմիր բանակում կառուցվում ե բացառապես լիակատար կամալորության սկզբունքով, մենք հարկադրված ենք լինում մերժելու զորքի այս նոր տեսակի մարտիկ դառնալ ցանկացող բազմաթիվ մարտիկների ու հրամանատարների:

Բանվորագյուղացիական կարմիր բանակի հաղարակոր ու հազարավոր մարտիկներ պահանջում են, վորպեսզի իրենց սովորեցնեն պարագյուտային գործը: Պետք ե ասել ձեզ, ընկերներ, վոր պարագյուտային գործը, այդ արվեստը, վոր առավել նուրբ և տեխնիկապես բարդ արվեստներից մեկն ե, կարմիր բանակը յուրացրել ե, և յուրացրել ե վոչ թե միայն վորպես սպորտ, վորը արիություն ե կոփում, այլ վորպես կարեոր ճյուղերից մեկը: (Ծափահարություն):

Կարելի՞ յե արդյոք այս ամենը համարել ստախանովական շարժում բանակում: Յես կարծում եմ, վոր զա անպայման այլպես ե: Կարմիր բանակի վերաբեր-

մամբ ստախանովական շարժումը նախ և առաջ սոցիալ-վաստորեն դաստիարակված, իրենց հայրենիքի պաշտպանության ուժեղացմանն ամեն կերպ ծարավի, ամբողջ բազմազան նոր մարտկան տեխնիկային տիրապետած, նոր, լավագույն, հմուտ և խիզախ մարդկանց մասսայական վերելք ե, այն մարդկանց, վորոնք իրենց զենքից վերցնում են բոլորը, ինչ նա կարող է տալ, անընդհատ կատարելագործում են նրա ոգտագործման մեթոդներն ու յեղանակները, վորովեսդի ուժերի և միջոցների նվազագույն ծախսումով հասնեն առավելագույն արտադրողականության՝ թշնամու դեմ մղած պայքարում, յեթե նա համարձակվի մեզ վրա հարձակվել: Կարմիր բանակային ստախանովակաները նույնպես, ինչպես և նրանց յեղայրները ձեռնարկություններում, փշրում են իրենց զենքի և մարդկային հմտության սահմանված նորմատիվները, նույնպես հաղարավոր և հաղարավոր ընկերներ են տանում իրենց հետեւից դեպի առաջ, դեպի լավագույն ցուցանիշները:

Յեթե այս կերպ մոտենանք այս հարցին, ապա մենք կտեսնենք, վոր բավական թվով ստախանովականներ ունենք նաև տանկիստների մեջ: Մեր տանկիստները հաջողությամբ հասնում են այն բանին, վոր նրանց տանկերը ամենապարզ հարմարանքների չնորհիվ, իսկ վոր գլխավորն ե՝ նրանց առաջնորդների, տեխնիկների, հրամանատարների քննախույզ աշխատանքի չնորհիվ աղատորեն անցնում են ճահճով, մի բան, վոր նրանց «նորմաները» հաշվի չեյին առել, անցնում են գետեր, լճեր, և մինչև անզամ ծովածոցեր՝ ալիք յեղած ժամանակ: Մենք քիչ քաջարի առն-

կիսամներ չունենք, վորոնք ինչպես վերտուոզներ, տառացիորեն խաղացնում են իրենց ահեղ մեքենաները:

Մեր նավաստիները, առաջին հերթին մեր ստորջրյա նավերի քաջարի մարտիկները, իրենց նոր նավակներում նույնպես գերազանցում են այն թերորիական հաշվարկումներն ու նորմաները, վոր սահմանված են նրանց նավերի համար:

Այս խնդիրների լուծումը հեշտ չե և շատ հարկավոր գործ ե, վորը մեզ, հրամանատարներիս, հնարավորություն և տալիս նոր ձևով, բոլեկիկան արդյունավետությամբ լուծելու մեքենաների գործադրման ինդիբները, մեքենաներ, վոր սոցիալիստական ինդուստրիան տալիս ե իր բանակին: Անհամար յերեվելի մարդկի կարելի յե գտնել նաև մեր հրետավորների, հետևազորի, հեծելազորի, սակրավորների, քիմիկների, կապավորների, վերջապես մեր սազմական արհեստանոցների, պահեստների, աերոդրոմների աշխատանքների մեջ, մեր շինարարների մեջ, ուղղմական յերկաթուղայինների մեջ, վորոնց աշխատանքը միանդամայն հարևնման և ժողովրդական տնտեսության համապատասխան ճյուղերին:

Յերեկ այսուղ ընկեր Սերգոն պերճախոս կերպով հերքում եր տեխնիկայի ամեն տեսակի խոկական և կարծեցյալ գիտակների, մեր արդյունաբերության «գիտակների» ամեն տեսակի թերորիաները:

Յես ել կերեմ մեզ մոտ բանակում յեղած բազմաթիվ գեղքերից մեկը: Պրոֆեսոր Կրաչկովսկին իր աշխատություններից մեկում հաղորդել ե, թե իր գեկավարությամբ ուլս կտրելը կատարվել և մուճի 11—15 հարվածով: Պրոֆեսորը 11 հարվածը նվազա-

գույն և ոեկորդային և համարում: Մեր յերկաթուազային զորամասերից մեկի ջոկի հրամանատար ընկեր Զիմովեցը ոելսեր կտրելու դործ եր սովորեցնում կարմիր բանակայիններին: Տեսնելով, վոր հարկ ելինում շատ աշխատանք ու ժամանակ ծախսել, ընկեր Զիմովեցն սկսում ե վերլուծել ոելս կտրելու պրոցեսը: Որորին նա ուսումնասիրում ե ճեղքերի ուղղությունը, ուսումնասիրում ե հարվածի ուժը և այլն և իր յեզրակացություններն ե անում: Շուտով նա ոելսը կտրում ե արդեն յոթը հարվածով: Նրա դասակի հըրամանատար ընկեր Կոստիլկան և ուրիշ մարտիկներ կառարելագործում են Զիմովեցի մեթոդը, ուսումնասիրում են ճեղքերը, գտնում են ոելսերի նվազագույն դիմադրության տեղերը և ի հակակշիռ պրոֆեսորի պնդումների, հասնում են այն բանին, վոր ոելսերը կտրում են յերեք, մաքսիմում չորս հարվածով: Այս մեթոդը յեռապատիկ ուժեղացնում ե աշխատանքի տեմպը: (Մափահարություն):

Ընդվորում պետք ե նկատել, վոր այսպես կտրում և վոչ թե վորեւ հայտնապես ուժեղ մեկը, այլ միջակ ուժի տեր մարդը: Միայն թե պետք ե իմանալ, թե ինչպես անել: Իսկ այժմ սա արդեն սիստեմ ե դարձել և ոելսը կտրում են յերեք հարվածով: (Մափահարություն):

Ընկեր Սերգոն անուայման իրավացի յեր, յերբ նա յերեկ ասում եր, վոր մեր տեխնիկներն ու ինժեներները, տնտեսավարներն ու կազմակերպիչները պետք ե խորը մտածեն այս բոլոր հարցերի վրա:

Ահա թե, ընկերներ, վորտեղից ե առաջ դալիս այն ահազին հետաքրքրությունը, վոր Բանվորագյու-

ղացիական Կարմիր բանակն այժմ ցույց ե տալիս ստախանովական շարժմանն աշխատանքի ամեն մի ասպարեզում:

Ընկեր Շվերնիկն այստեղ ասում եր, թե ստախանովական մեթոդները հարկավոր ե փոխադրել պրոֆեկազմակերպությունները: Հավանաբար կարելի յեփոխադրել (ծիծաղ): Յեկ հարկավոր և փոխադրել, յեթե դուք, արհմիութենական աշխատողներդ, բյուրոկրատորեն չեք աշխատում: (Ծիծաղ, ծափահարություն):

Տվյալ հարցում յես չեմ վիճում ընկեր Շվերնիկի հետ: Ստախանովյան մեթոդներն անհրաժեշտ ե փոխադրել աշխատանքի բոլոր ընադալառները: Այստեղ յելույթներ ունեցան արտադրության ամենաբարձագան ճյուղերի ներկայացուցիչները: Մենք այստեղ լսեցինք հանքահատներին, հնոցավարներին, Փրեզիյր բանվորներին, մանածաղործներին, յերկաթուղային մեքենալարներին ու սլաքավարներին, շատ ուրիշ մասնագիտությունների բանվորներին, տեխնիկներին և ինժեներներին, նրանք բոլորն ել խոսում եյին այն ժեժագույն արդյունքների մասին, վոր ստացել են աշխատանքի նոր ստախանովյան յեղանակները կիրառելով:

Ընկեր Սերգոն և այստեղ յելույթ ունեցող մյուս ընկերները բացարձակապես իրավացի եյին՝ առելով, թե այդ հրաշալի, բարիս տառացի իմաստով սոցիալիստական շարժումը, վոր կոչվում ե ստախանովյան, վինոգրադովյան, կրիվոնոսյան և այլ պանծալի անուններով, վոր դա, այդ շարժումը պետք ե անպատճառ յուրացնի, գլխավորի ինժեներա-տեխնիկական

կտղմը, պետք է դլխավորեն մարդիկ, վորոնք կոչված են զեկավարելու մեր ձեռնարկությունները, զեկավարելու մեր պետական շինարարությունը և ամենից առաջ մեր ժողովրդական տնտեսությունը։ Առանց այդ ընկերների, այդ թե մեծ և թե փոքր զեկավարների կողմից սոցիալիստական աշխատանքի հերոսների ձեռնարկումներին ամենաակտիվ մասնակցություն, ամենալայն ողնություն ցույց տալու, շարժումը չ' տա այն բոլոր անհրաժեշտ և վոչ միայն հնարավոր, այլև անպայման իրագործելի արդյունքները, վոր նա պետք ե ատ։

Մինչդեռ այստեղ հանդես յեկան բավական թվով ինժեներներ ու տնտեսավարներ, բայց նրանցից և վոչ մեկ, — իսկ չե՞ վոր նրանք արտադրության կազմակերպիչներն են — չկարողացավ այս ամբիոնից ասել, թե ինքը դեռևս մինչև Ստալինովը և մինչև Կրիվոնու, մինչև Բուսիդինը և Ոմելյանովը իր մոտ աշնուը, մինչև Բուսիդինը և մեր ձևով — սոտախանովախատանքը կազմակերպել և նոր ձևով — սոտախանովարար։ Յուրաքանչյուր ինժեների և տնտեսավարի շատ բար։ Յուրաքանչյուր ինժեների և տնտեսավարի շատ մարդիկ են յենթակա։ Սակայն նրանցից համարյա մարդիկ են յենթակա։ Սակայն նրանցից համարյա թե վոչ վոք չասաց, թե ինքը կարողացել և այնպես կազմակերպել մարդկանց, այնպես հարթել բոլոր գեկազմակերպել աշխատանքի պրոցեսում, վոր աշխատանքի տալները աշխատանքի պրոցեսում, վոր աշխատանքի արտադրողականությունն աճել և յերկու կամ յերեք աճամտ, շեշտակի ընկել և ինքնարժեքը, բարձրացել և վորակը։ Մեր ինժեներները և տնտեսավարները գժբախտարար վոչ միայն նախաձեռնող չհանդիգթբախտարար վոչ միայն նախաձեռնող չհանդիգթբախտարար աշխատանքի սոցիալիստական արտադրողականության համար, աշխատանքի նոր մեթոդների համար ծավալված նոր շարժման մեջ, այլև

նրանցից շատերը մինչև այժմ ել իրենց համար անհրաժեշտ բոլոր յեղբակացությունները չեն արել ստախանովյան շարժման հզոր ավելքից։ Լավագույն բանվորները հանկարծ իրենց զեկավարներից առաջ դտընվեցին։

Դուք հարց կտաք՝ իսկ ինչպե՞ս ե քեզ մոտ, Կարմիր բանակում, վորտեղ հրամանատարական կազմը կարմիր բանակայիններից միշտ առաջ պետք ե լինի։ Արդյոք ամեն ինչ կարդի՞ն ե։ Դիբախտաբար, ընկերներ, յես նույնպես չեմ կարող առանձնապես պարծենալ։ Կարմիր բանակն ընդհանուր շատ բան ունի արդյունաբերության հետ, կարմիր բանակի կաղըբերը՝ մեր տնտեսավարների հետ։ Մեր հրամանատարական կազմը, ամբողջովին վերցրած, հրաշալի, փորձված, կուլառւրական կաղըբեր են։ Այնուամենայնիվ, մեզ զեկավարներիս, միշտ մտատանջություն ե պատճառում այն հոգաւը, վոր այդ կաղըբերը մասսաներից հետ չմնան։ Թվում ե, թե հրամանատարը, կազմակերպիչը, կառավարիչը, դիրեկտորը գոյություն ունենա հենց նրա համար, վոր միշտ առաջ գնան, ուղղություն տան աշխատանքին, արմատացնեն աշխատանքի լավագույն մեթոդները, իրենց հետեւից տանեն իրենց յենթակա մարդկանց։ Գործնականում, դիբախտաբար, հաճախ այլ դրություն ե ստացվում։ Մեր սոցիալիստական յերկրի կյանքն այնքան կերպարանակոխվել ե, միինուավոր մարդիկ աճում են այնպիսի փոթորկահույլ տեմպով, վոր հաճախ հրամանատարական կաղըբերը չեն հանում այդ մասսաների հետեւից։ Մասսայի պահանջները (յես նկատի ունեմ նրա պահանջները գործի դրվագքի, ուսման, կուլտուրայի նկատմամբ), նե-

բառյալ նաև կարմիր բանակայինի պահանջները, վորն այսոր միքանի գլխով ավելի բարձր ե քան յերեկ, իւկ վաղն ալելի գրադետ ու կուլտուրական և լինելու, քան այսոր,—այնքան արագ են աճում, վոր հըլու, զամանատարները հաճախ ի վիճակի չեն պատշաճ ձեռվ պատասխանել դրանց, ընդդրկել, զլիսավորել, վերակառուցվել՝ նոր ձեռվ աշխատելու համար: Ուստի և մենք մեզ մոտ,—իսկ այդ արվում և այժմ ամենուրեք,—միշտ սովորեցնում ենք, վերակրթում ենք մեր կաղրերին, լրացուցիչ կերպով վորակավորում, վերավորակավորում ենք նրանց, վորպեսողի նրանք հետ չմնան որվա պահանջներից և կարմիր բանակային լայն մասսաների պահանջմունքներից, կարեքներից: Սուկայն այս ել միշտ բավական չել լինում: Այժմ կատարելաստես իր տեղում կարող ե լինել միմիայն այնպիսի հրամանատարն ու պետը, վորն անընդհատ, բառացի անընդհատ, կատարելագործվում և առանց բառացի անընդհատ:

Եա՞ն, արդյոք մեր հրամանատարների մեջ ստախանութեաններ, կա՞ն արդյոք այսպիսի մարդիկ, վորանութեանների չեն սպասում, ցուցումներով, բոնք հրամանների չեն սպասում, այլ ստեղծագործում, աշխաշաբում, առաջ են զնում և նոր ուղիներ են վորոնում, առաջված նպատակներին, խնդիրներին հասնելու հրամար: Անպայման կան, և խիստ շատ: Մեր հրամանատարների մեջ շատ են այնպիսիները, վորոնք իրոք հանդիսանում են մասսների արժանավոր զեկավարները, արժանավոր առաջնորդները, այն մասսաների, վորոնց կոչված են նրանք կառավարելու, զեկավարելու, հրամանդելու: Բայց կրկնում եմ, հրամանատա-

րական կաղրերի աճման տեմպի ու մասսայի միջն խղում առաջնալու վտանգը գոյություն ունի նաև կարմիր բանակում, վորովհետեւ մեր մեծ յերկրությանը ծաղկում ե բուռն թափով ու անդադար: Այն, ինչ վոր լավ եր յերեկ, այսոր այլեւ չի բավարարում, իսկ վաղը հետամնացություն կհանդիսանա:

Յես կարծում եմ, վոր թե՛ արդյունաբերության մեջ, թե՛ տնտեսական կյանքի մյուս ճյուղերում (թողներեն ինձ ժողովրդական տնտեսության աշխատողները) բանվորական մասսաների և հրամանատարական կաղրերի միջև այս խղումը գոյություն ունի ավելի մեծ չափով: Դուք լսեցիք Սմետանինի, Ոմելյանովի, Վինոգրավովանների և այլ ստախանութականների յետություները: Նրանք հո բոլորն ել պրոֆեսորներ են իրենց գործում: Ոմելյանովը սոսկ մեքենավար չե, Վինոգրավովան սոսկ ջուհակ չե, սրանք պրոֆեսորներ են, անըուշտ պրոֆեսորներ՝ իրենց մասսադիտության մեջ (շարժում դահլիճնել): Նրանց պետք ե մի քիչ սովորեցնել և այն ժամանակ իրենց գրադանը կրնեն մեր «գիտնական» պրոֆեսորներին: (Ծիծալ, բուռն ծափահարություն):

Հեշտ չե այդպիսի մարդկանց զեկավարել, նրանք նոր մարդիկ են, վորոնք յուրահատուկ ձեռվ են հասկանում իրենց կոչումն ու նշանակությունն արտադրության մեջ, նրանց պետք ե զեկավարել շատ հմուտ կերպով: Բնկեր գիրեկտորները, ցեխերի պետերը, ձեռնարկությունների ինժեներները պետք ե շատ-շատ աշխատեն, համառորեն, հմտորեն և ստախարար, աղնվորեն, աշխատեն, վորպեսողի համապատասխաննեն իրենց կոչմանը, մորթենդի մուշեց բարչ չգան, չքննեն,



արդեն ուրիշք սկսած յերգում ձայն պահող չլինեն՝
թերևս և լավ, բայց այսուհանեղերձ ձայն պահող:
Դեկավարը միշտ պետք է նախաճեռնող, առաջալոր
լինի, կարողանա առաջ և առաջ տանել մեր հրաշալի
կողքերին: Նրանք, այդ կազրերը կան մեր պետական
սոցիալիստական աշխատանքի բոլոր ասպարեզներում:

Յես անհրաժեշտ եմ համարում կանդ առնել մի
հարցի վրա ել՝ կաված ստախանովյան անունն
ստացած պրոլետարական շարժման զարդացման հե-
տալա խնդիրների քննարկման հետ:

Յերեկ ընկ. Որչոնիկիձեն բացարձակապես ճիշտ
եր ասում, վոր մենք պարտավոր ենք, աշխատանքի
արտադրողականության բարձրացման հետ միասին,
պահանջել նաև անպայման բարելավել թե յուրաքան-
չյուր առանձին բանվորի և թե ամբողջ արտադրու-
թյան, արտադրանքի վորակը:

Որչոնիկիձ. Ճիշտ ե:

Վորոշիլով. Յես ընկեր արտադրողներ, պետք է
անկեղծորեն ասեմ, վոր մենք միշտ ամբողջովին չե
վոր բավարարված ենք արտադրանքի այն վորակով,
վոր տալիս եք դուք մեղ՝ կարմիր բանակին:

Ընկերնե՛ր, դուք ծանոթ եք մեր ինքնաթիւներին,
հաճախ եք տեսնում մեր տանկերը, թնդանոթները,
գնդացիրները, հրացանները, մեր ամբողջ ուսպանական
հանդերձանքը: Այս բոլորը հրաշալի արտաքին ունեն,
այդ բոլորը հիանալի յե, հրաշալի հզոր սպառա-
զինում ե: Վատ տանկերը չեն կարող միքանի որում
մեծ խմբերով անցնել 700 կիլոմետր, վորից յերեք
քառորդը՝ լրով, ու առանց վորեկ պատահարի և

նույնիսկ կրարվածքի: Դրանք պետք է հրաշալի տան-
կեր լինեն և այդպես ել են:

Մեր մարտիկներն ամեն տեղ ու ամենուրեք հնար-
ներ են դանում, վոր մեր բազմատոնն տանկերը գնան
ցամաքով և լողան ջրով, հետությամբ հաղթահարե-
լով և' ցեխը, և' ճահիճը, հաղթահարեն հնարավոր և
անհնարին խոչընդուները: Յեվ տանկերը գնում են:
Այդ բոլորը շատ լավ և այդ բոլորն անհերքելի
փաստեր են:

(Նախազահուրբյան մեջ յերեսում և ընկեր Ստա-
լինը: Բոլորը վոտֆի յեն կանգնում: Ծափահարու-
թյուն: Բացականչություններ՝ «Ուռա», «Կեցցե՛ մեր
իմաստուն ընկ. Ստալինը, ուռա»: Ծափահարություն:
Բացականչություններ: «Կեցցե՛ մեր սիրելի Ստալի-
նը»: «Ուռա» բացականչություններ, ծափեր: «Մեր
ստախանովական վազույնն ընկ. Ստալինին»: «Ուռա»
բացականչություններ, ծափահարություն):

Ընկերներ, կը կուռմ եմ՝ մեր մարտական մեքենա-
ները, մեր ամբողջ սպառազինությունը, մեր ամբողջ
հանդերձանքը շատ լավ են: Բայց յեթե գուք ինձ
հարցնեյիք, թե մեղ պետք են արդյոք և կարո՞ղ ե
արդյոք մեր արդյունաբերությունը տալ այսոր սպա-
ռազինության միքանի տեսակի ավելի լավ նմուշներ,
և ավելի լավ արտադրանք, քան ստանում ենք մեր
արդյունաբերությունից, յես կասեյի՝ կարող և տալ
ավելի լավ և լավ կլիներ ավելի շուտ ստանայինք
այդ լավը: (Ծափահարություն):

Հիմարություն կլիներ ընդհանրապես ասել՝ տվեք
ավելի լավ արտադրանք, վորովհետեւ «ավելի լավը»
սուածպական, անսահման հասկացողություն ե: Լավը

միշտ կարելի յե դերազանցել ավելի լավով և այսպիս անվերջ: Բայց մենք զիտենք սպառազինության միքանի տեսակների նմուշներ, վորոնց անհրաժեշտ է հավասարվել նաև մեղ: Մեզ շրջապատել են ավելի կամ պակաս չափով թշնամի պետություններ, ընդ-վորում շատերն «աղելիք», քան «պակաս»: Այս թշնամի պետություններն ունեն իրենց բանակներն իրենց ուաղմական տեխնիկայով: Յեվ ահա մենք ուղղում ենք ունենալ զենքի բոլոր տեսակների, մարտական ամբողջ տեխնիկայի ամենալավ նմուշները, այն եւ պատրաստված ամենամեծ խնամքով, ճշտությամբ և ամենականավոր կերպով:

Ինքնաթիւնների վրա, մեր ստախանովական մարտիկները, հիանալի ողաչուները հրաշքներ են գործում: Մյուս զառակարգերի մարդիկ յերազել անդամ չեն կարող այլպիսի վարպետության մասին: Բայց մեր ինքնաթիւններն ել կարող են ամենալավը լինել աշխարհում և պետք ե լինեն: Դուք, ընկեր արտադրողներ, տալիս եք բարձաթիվ այնպիսի մեքենաներ և բարդ տեխնիկա, վորոնց մասին մենք դեռ ամենավերջին ժամանակներս կարող եյինք միայն յերազել, այնուհանդերձ մենք այսոր ել վորոշ պահանջներ ունենք ձեղանից: Ընկ. Ստալինը, վորն ընդհանուր զբաղվում է բանակի սովորապինման հարցերով, ընկ. Որջոնիկինյին, ինձ ե անմիջականորեն սովորապինության միջոցներ արտադրող ձեռնարկությունների ղեկարվեներին քանից առել ե, վոր տանկերը, ինքնաթիւնները, թնդանոթներն ոճառ չեն, լուցկի չեն, հրոշակ չեն, զրահնք պաշտպանության միջոցներ են, ուստի և բարեհաճեցեք աշխատել ինչպես հարկն ե,

բարեհաճեցեք այդ կարգի արտադրանքը տալ այսպիսի վորակով, վոր նա վոչ մի տեղ և յերբեք չկարողանա անհարմար գրության մեջ զցել մեր հրաշալի մարտիկներին, վոր նա, այդ մարտական արտադրանքը լավագույնը լինի այն բոլորից, ինչ պատրաստում ե մեր արդյունաբերությունը:

Յեվ յես, ընկերներ, պետք ե ուղղակի ասեմ, վոր զեռ բոլորն ինչպես հարկն և չեն կատարում ընկեր Ստալինի այդ ցուցումները: Մինչդեռ նցանք կարող են ամբողջ 100 տոկոսով կատարվել և պետք ե կատարվեն:

Յես կարծում եմ (գիմելով ընկ. Որջոնիկինյին), վոր ընկեր Որջոնիկինյին այդ հրաշալի ստախանովյան շարժումը պետք ե արմատացնի առաջին հերթին և ինչպես հարկն ե մեր հատուկ արտադրությունների մեջ, և արմատացնի վոչ թե այդ շարժման նեղ լուրումամբ՝ տալով միայն ավելի մեծ քանակությամբ, այլ հատկապես ամբողջ ծավալով, ձիշտ լմբանելով շարժման ելությունը, այսինքն՝ վոր մեղ տան և՛ քանակ, և՛ անպայման բարձր վորակ:

Մենք շրջապատված ենք բազմաթիվ թշնամիներով: Ճիշտ ե, Բանվորազյուղացիական կարմիր բանակը ներկայում ահավոր ուժ և ներկայացնում: Նա ուժեղ ե իր անհուն նվիրվածությամբ կենին-Ստալինի զործին: Նա ուժեղ ե իր ժողովրդի վոչ մի տեղ և յերբեք չտեսնված սիրով գեղի լինը: Նա ուժեղ ե իր կազմակերպվածությամբ, համախմբվածությամբ, ուժեղ ե իր նոր բազմաքանակ զենքով: Կարմիր բանակի ուժն անխորսակելի յե: Բայց մենք չենք կարող մեր աշքը նաև մեր թշնամիների ուժի հանգակել մեր աշքը նաև մեր թշնամիների ուժի

Դեպ: Մեր թշնամիները բնակ մտադիր չեն ճանապարհ զիջել սոցիալիստական պետությանը: Ընդհակառակը, նրանց սրբազն իղձն ե՝ հարձակվել մեղվրա, խորտակել Խորհրդային Միությունը:

Մենք, բոլշևիկներս, կենինի և Ստալինի աշակերտներս, յերբեք չենք ստարակուսել մեր վերջնական հաղթանակի նկատմամբ: Այժմ, յերբ մեր ուժերը տառնապատկվել են, մենք ամենենին չենք դնում այն հարցը, թե կհաղթե՞նք արդյոք թշնամուն, թե վոչ: Կհաղթե՞նք անպարհան: Այժմ արդեն այդ չե բանը: Այժմ հարցն այսպես ե գրվում՝ ի՞նչ գնով, ինչպիսի՝ ջանքերով, ինչպիսի՝ զոհերով կհաղթե՞նք մենք: Յես անձամբ կարծում եմ, — այսպես ե կարծում ընկ. Ստալինը, այսպես ե կարծում ընկ. Որզոնիկիձեն, մեր ամրող կենտկոմը և կառավարությունը, — վոր մենք պետք ե հաղթենք քշնամուն, յերբ նա հանդգին հարձակվել մեզ վրա, ֆիչ արյունով, նվազագույն միջոցներով և մեր պահճակի մարտիկիների հեարավորության չափ փոքրարիկ կյանքերով: (Ծափահարություն): Իսկ քանի վոր բանն այսպես ե, և այլ կերպ չի կարող լինել, մենք պետք ե ինչ գնով ել լինի, հասնենք, և արագորեն հասնենք, այն բանին, վոր մեր բանվորացյուլացիական Կարմիր բանակի սպառազինությունը, հաղեցվածությունը, մատակարարությունը առաջնակարգը, լավաղույնը լինի աշխարհում: (Ծափահարություն): Կարո՞ղ ենք արդյոք հասնել դրան: Անպայման: Մենք ամեն մի անհրաժեշտ բան արդեն ունենք, մենք պետք ե հասնենք դրան և կհասնենք:

(Ծափահարություն):

Աշխարհում՝ և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում կան

մարդիկ, վորոնք բարեկրաց իրենց ատելությունն են արտահայտում մեզ և տենդորեն հարված են պատրաստում մեր դեմ: Մենք պետք ե միշտ աչալուրջ լինենք: Վորքան ավելի լավ աշխատեն մեր գործարանները, հանգահորերն ու յերկաթուղիները, կուտնառեսություններն ու խորհանտեսությունները, վորքան ավելի հաջող զարգանա ստախանովների և բուսիդինների, ամետանինների և կրիվոնոսների, վինովլադովների ու դեմ չենկոների շարժումը, վորքան ավելի ուժեղ ու կազմակերպված լինի Կարմիր բանակը, այնքան ավելի անհուսալի կլինեն մեր թշնամիների վորձերը կորիլ սկսելու մեր դեմ:

Եսո համոզված եմ, վոր մեր հրաշալի բանվոր դասակարգը և կոլտնտեսական գյուղացիությունը, Խորհրդային Միության բոլոր աշխատավորները, մեր գիտնականները, տնտեսավարները, ինժեներներն ու տեխնիկները, և մենք, Կարմիր բանակի մարտիկներու, մեր Ստալինի առաջնորդությամբ ամենակարծ ժամանակամիջոցում կհասնենք աճման ու ծաղկման նոր, նույնիսկ մեզ համար չլաված տեսմով՝ աշխատանքի, կյանքի ու կուլտուրայի բոլոր ասպարեզներում:

Մեզ զեկավարում, մեզ վետի նորանոր հաղթանակներ և տանում սոցիալիստական հեղափոխության առաջին մարշալը, թե՛ քաղաքացիական պատերազմի, թե՛ սոց. վինարարության ճակատներում տարած հաղթանակների, թե՛ մեծ կենինի ժառանգություն հանդիսացող մեր կուսակցության սմբացման մեծ մարշալը, ամբողջ մարդկության կոմունիստական շարժման մարշալը՝ մեր Մեծ Ստալինը: (Բոլոր վուտքի յեն կանգնում: Թնդում են «ուռա»-ները: Ովացիան

տեսում ե մի ժանի բոպե): Նրան՝ կոմունիզմի այլ
խոկական մարզակ Ստալինին, նրան՝ մեծ մարդկանցից
մեծագույնի՝ Լենինի հաջորդին, նրան, վորն որպես
վուր ցույց ե տալիս մեղ բոլշևիկյան աշխատանքի
լավագույն սրբնակները, վորն ավելի քան վորեւ մե-
կը դիտե, թե ինչ պետք ե անել այսոր, վորպեսզի
հաղթենք վաղը և ընդմիշտ՝ մեր պերուետարական
ուռարկ:

Մեր ստախանովականներին, բուսիզինականներին,
վիճողագույնականներին՝ Խորհրդային Միության լա-
վագույն մարդկանց—ուռարկ:

(Բուռն ծափակարություն: Բոլորը վոտի յեն
կանգնում: Բացականչուր-յուններ՝ «ուրա՛ Մեծ Ստա-
լինին, ուռա՛»: Ամբողջ դահլիճը հոտնկայս վողու-
նում ե ընկ. Ստալինին)



579

ԳԻՒԸ 30 Կ.

ЦЕНА 30 К.



Կ. Е. ВОРОШИЛОВ
**Речь на первом всесоюзном
совещании рабочих и работниц-
стахановцев**

Армпартнэдат, Эреванъ, 1935